ԱՐՄԱՆ
ԿՈՌԻԿՅԱՆ



ԱԿՈՍՆԵՐՈՒՄ

«Հայաստան»

ԱՐՄԱՆ
ԿՈՌԻԿՅԱՆ

ԱԿՈՍՏԵՐՈՒՄ

Ա II/36965

«Հայաստան»
հրատարակչություն
Երևան 1965

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

АР2
Կ – 77

Այս ժողովածուում ամփոփված են հեղինակի հատկապես վերջին տարիներում գրած մի շարք բանաստեղծությունները, բալլադներն ու պոեմները, ինչպես նաև վաղ շրջանի նրա չափածո ստեղծագործություններից լավագույնները։

Ժողովածուն ունի հետևյալ բաժինները. «Հայրենիք», «Ոսկյա փակագիծ», «Վերջալույսից առաջ», «Բալլադներ» և «Պոեմներ»։

Арман Ананиевич Котикян

В бороздах

(На армянском языке)

„Издательство Айастан“

Ереван, 1965

ԿՈՄԻՏԱՍ

Հեռու-հեռուն բռնկվեց բոցակարմիր հրդեհում
Հորիզոնը վարդավառ,
Ասես բուռ-բուռ շաղեցին երկնքից վարդ ու քրքում
Արոտներում անհամար։

Շողերն ընկան դաշտերին ու փարվեցին կարոտով
Քնքուշ սրտին մայր հողի,
Գարնան բույրով արբեցին մարմանդները ջինջ ու զով,
Ժպտաց այգին խաղողի։

Նորից հնչեց սրնգի երգը անուշ, մեղմօրոր,
Կարոտի պես, սիրո պես,
Հորովելն է ձայն տալիս ու ավետում ձորե ձոր
Այցը գարնան գեղատես։

Ո՞վ է նստել ունկնդրում ընկուզենու ծառի տակ,
Աչքերում վիշտ ու երազ.
—Զա՛յն տուր, Հանճար տառապյալ , եղերական նահատակ,
Զայն տուր, անմահ Կոմիտաս...